

Նոր ծնունդ

Այստեղ կանգառն է ամենավերջին
 նաեւ իսկական ճակատն առաջին
 կը հասնիս անցեալ ծրարներուդ հետ
 բայց դառնալ չկայ նորէն դէպի ես

Կու գաս հեւ ի հեւ եւ հեռուներէ՛ն
 օտար ափերու սուր պայքարներէն
 ու այստեղ յանկարծ հոգի, շունչ կ'առնես
 իրենք՝ մեր սարեր
 դուն ալ մէկ քարն ես

Կը հասնիս ծայրը կարծես աշխարհին
 որ ծայրն է նաեւ նոր ճանապարհին
 կը հանգչիս այստեղ, գոհունակ ու հեզ
 կ'որոնես այլ բան
 ու կը գտնես քեզ

Որքան տոկուն են, ուժեղ եւ տոկուն...
իրօք ամրոց է իւրաքանչիւր տուն
թէկուզ կիսաքանդ
կտուրն անաւարտ
պատուաւոր տուն է, ամուր ու հպարտ

Քաղցր են եւ ծուռ
քաջ են ու ընտիր
- հա՞րց կայ

«ինչ'ե՞լ էլ...»

ոչինչ

անխնդիր -

Անվախ են իրօք
ժայռեր իսկական
մինչ ամէն կողմ դէռ վտանգ ու ական

Որքան տոկուն են, ուժեղ, դիմացկուն
 ամեն բնակիչ, մեծ, մանուկ, տարեց,
 Ճակատի վրայ՝ զինուորը անքուն
 իսկ հողը պահող... ամէ՛ն ոք
 կանգուն

Դեմքերուն վրայ չկայ ցաւ կամ հոգ
 այլ խաղաղ կեանքի հաշտ ու հեզ մորմոք
 չկան հեռաւոր խաւարներ եւ սուգ
 (կամ... լաւ, երբեմն, մնացող մի շուք)

Այստեղ ա՛լ չկայ խարխափում, հարցում
 այլ միայն հոգւոյ անդարձ վերացում
 Ջտում կայ միայն
 Դատաստան Վերջին
 Էական մաքրում ի դէմ Յաւերժին

Այստեղ սին մարդը երկար չի տեւեր
 չկան աւելորդ կարգեր ու ձեւեր
 այստեղ ոչ մէկը ինքզինք չի հերքեր
 եւ չկան դատարկ խօսքեր ու երգեր

Այստեղ իրաւ է

անեղծ

հարազատ

Եւ իմաստ ունի ըլլալ ողջ, ազատ
 այստեղ ա՛լ չկայ հայ թափառական
 ոչ ալ մեծ ճառեր գաղափարական

Դատարկ խօսք էիր եւ ապարդիւն կիրք
 կը դառնաս պայքար

գործ

Եւ ամուր դիրք

Ինչ որ երազ էր
միայն անուրջներ

այստեղ կը դառնան հաստատ կամուրջներ

...

...

...

Իսկ յետո՞յ...

Իսկ յետոյ... ոչինչ
ոչինչ ու ոչինչ
ունայնությունը ահաւոր ու ջինջ

Ամէն բան անշարժ
դուրսերը՝ ոչ ոք
օդին մէջ կիզիչ լռութիւն ու շոգ

ի՞նչն է իրական
ի՞նչն է սուտ ու կեղծ
օդը իսկ խոթ է, ինքնին շնչահեղձ

Փողոցներուն մէջ արձագանգ անյայտ
կուրացնող լոյսի անբիծ ճառագայթ

զուտ անէութիւն
ամէն բան անբան

ու դեռ ոչ մէկ տեղ տանող այդ ճամբան

Բլուրը դարձած կարծես անապատ
ամէն կողմ միայն պարիսպներ ու պատ
ցմահ բանտ, կալանք, ծնունդէն ի վեր
միակ փրկութիւն՝ օր մը, դէպի վեր

Ժամանակը սին ու աննպատակ...
ան ալ կանգ կ'առնէ, լոյծ ու անյատակ
պահը չի սահիր
այլ կը ճահճանայ
ամէն մարդ միայն ըլլալ կը ջանայ

Չանձրոյթ չէ միայն
 այլ անկէ անդին
 յորդ արեւի տակ՝ տագնապ է մթին
 հոգախտ է խորունկ
 զուսպ, հաշտ ու հանդարտ
 անձայն ճիչ ցաւի
 անբուժ
 անաւարտ

Ոչինչ կայ ստոյգ
 ոչ ոչ
 ոչ այո

- օր մը կը բացուի՞ն Դռներն այդ Յուսոյ-

մարդիկ չքացած

- *Առաւօտն Լուսոյ...* -

դեռ տեղ չգացած՝ արդէն վերջ եւ

վսյո՛

Քաղաքը ամբողջ ցնդած, ցնդական
ոչ մէկ բան իրաւ
ոչ ոք իսկական
ամբողջ քաղաքը՝ շլացում մը զիլ
օդացոլութիւն

բացակայ տեսիլ

Հայրուկ Շանկեան
«Ծ», Արսլայթրոս Հրատարակութիւն/ Ն.Ա.Մ., Արցախ, 2013

